# ՔԱՂՎԱԾՔ

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»**
**պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝**
**2021 թվականի մայիսի 13-ի, ժամը 14:00-ի նիստի**
**N 10 արձանագրությունից**

**ԼՍԵՑԻՆ.-** Հասարակակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Արամ Հակոբի Սարգսյանի «Մշակութաբանություն» ուսումնական ձեռնարկի** հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

Զեկուցողը նշեց. ներկայացված ուսումնական ձեռնարկում քննարկվում են մշակութաբանության ուսումնասիրության առարկայի, մշակույթի տեսության («մշակույթ» հասկացության իմաստային փոփոխությունները, մշակույթը կազմող բաղադրատարրերը, մշակույթի կառուցվածքը, գործառույթները, զարգացման օրինաչափությունները, հոգևոր գործունեության մշակութային ձևերը, արժեքներն ու քաղաքակրթությունը, մշակույթի և բնության, տնտեսության, հայրենիքի, ազգի փոխհարաբերության հարցերը և այլն), համաշխարհային (նախնադարից մինչև մեր ժամանակաշրջանը) և ազգային (հայ մշակույթը՝ վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը) մշակույթների համառոտ պատմությունը՝ մշակույթի զարգացման ընդհանուր օրինաչափությունների հենքի վրա:

Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել է 3 (երեք) դրական կարծիք.

1) Սեյրան Արտուշայի Զաքարյան՝ Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

2) Սուրեն Թարխանի Սարգսյան՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

3) Սոս Բաղրամի Մարգարյան՝ Երևանի «Գլաձոր» համալսարանի քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի դոցենտ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված ուսումնական ձեռնարկը «Մշակութաբանություն» դասընթացի առարկայի և խնդիրների տեսանկյունից հիմնավորում է համաշխարհային և ազգային

մշակութաքաղաքակրթական հիմնախնդիրների առանձնահատկությունները, ներկայացնում արդի աշխարհի մշակութային ընդհանուր պատկերը, տալիս մշակութաբանական գլոբալ հիմնախնդիրների սպառիչ նկարագիրը: Վերլուծությունն իրականացվում է խնդրո առարկայի վերաբերյալ հարուստ գրականության քաջատեղյակությամբ, քննադատական-հետազոտական դիրքորոշումների ներկայացմամբ, նյութի գրագետ և, միաժամանակ, մատչելի շարադրանքով: Ուսումնական ձեռնարկը կարող է օգտակար լինել աշակերտներին, ուսանողներին, ուսուցիչներին, դասախոսներին և բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվում են մշակույթի տեսության, համաշխարհային և ազգային մշակույթների պատմության հարցերով:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի, տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի խորհրդի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ հասարակակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Արամ Հակոբի Սարգսյանի «Մշակութաբանություն» ուսումնական ձեռնարկը** երաշխավորել հրատարակության (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն՝ կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

**Գիտական խորհրդի նախագահ՝** **Դ. Ռ. Գալոյան**

**Գիտական խորհրդի քարտուղար՝** **Ն. Հ. Դարբինյան**

2021 թ. մայիսի 13

Երևան

# ՔԱՂՎԱԾՔ

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»**
**պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝**
**2021 թվականի մայիսի 13-ի, ժամը 14:00-ի նիստի**
**N 10 արձանագրությունից**

**ԼՍԵՑԻՆ.-** Լեզուների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լուսինե Արմենի Հարությունյանի**, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Սուսաննա Ավետիքի Չալաբյանի** և դասախոս **Քրիստինա Մելսի Թորգոմյանի «English for Accountants»** (հայերեն՝ Անգլերեն հաշվապահների համար) **ուսումնական ձեռնարկի** և սույն ուսումնական ձեռնարկին կից, դասախոս **Քրիստինա Մելսի Թորգոմյանի «English for Accountants: Teacher's book»** (հայերեն՝ Անգլերեն հաշվապահների համար. Դասավանդողի գիրք) **ուսումնամեթոդական ուղեցույցի** հրատարակությունները երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

Զեկուցողը նշեց. ներկայացված ուսումնական ձեռնարկն անչափ օգտակար լուծում է մասնագիտական անգլերենը կատարելագործող հաշվապահների կամ այդ ոլորտում աշխատող անձանց համար, ինչպես նաև համապարփակ առաջարկ է ուսանողներին դասավանդման համար որպես ուսումնական նյութ ծառայելու տեսակետից: Ձեռնարկի կազմությունը բավական հավասարակշիռ է, պատշաճ ուշադրություն է հատկացվել լեզվի յուրացման բոլոր հիմնական հատվածներին: Այն բաղկացած է 15 դասից, որոնք վերաբերում են հաշվապահական ոլորտի տարբեր հասկացությունների քննարկմանը: Այն ամբողջությամբ փորձաշրջան է անցել 2019-2020 և 2020-2021 ուսումնական տարիների ընթացքում: Ձեռնարկում տեղ են գտել տարաբնույթ վարժություններ, որոնք նպատակ ունեն զարգացնելու ուսանողների գրավոր և բանավոր խոսքը, կատարելագործելու լեզվական հմտությունները: Վերջիններս հնարավորություն կտան ստուգել և ամրապնդել նյութի խորքային յուրացումը և ակտիվացնել տեքստերում կիրառվող բառապաշարը: Տեքստերին հաջորդող բառացանկը, որտեղ տրվում է տարբեր հաշվապահական եզրույթների թարգմանությունը, ուղղված է հարստացնելու ուսումնառուների մասնագիտական բառապաշարը: Ուսումնական ձեռնարկին կից դասախոսների համար նախատեսված է ուսումնամեթոդական ուղեցույց: Այն բազմաբովանդակ է, ներառում է համապատասխան թեմային առնչվող հավելյալ տեղեկատվություն, ստուգողական թեստեր, լրացուցիչ լեզվական նյութ տարբեր տեսակի քննարկումներ կազմակերպելու համար: Ուսումնամեթոդական ուղեցույցը կնպաստի բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը և նոր լեզվական նյութի ամրապնդմանը:

Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել է 4 (չորս) դրական կարծիք.

1) Քրիստինե Մուրադի Հարությունյան՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի օտար լեզուների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ:

2) Մանանա Հրայրի Թարփոշյան՝ ՈՀՄԱ (ACCA) անդամ:

3) Անուշ Սամվելի Խաչատրյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ:

4) Իրինա Սերգեյի Մխիթարյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի դասախոս, Երևանի պետական հմալսարանի թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասիստենետ, բանասիրական գիտությունների թեկնածու:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված ուսումնական ձեռնարկը նախատեսված է հաշվապահ ուսանողների, հաշվապահների, հաշվապահության տարբեր ոլորտներում աշխատող մասնագետների, ինչպես նաև անգլերենով հրատարակված հաշվապահական մասնագիտական գրականությունից օգտվել ցանկացողների համար: Ուսումնական ձեռնարկն ու ուսումնամեթոդական ուղեցույցն իրենց ուրույն տեղը կզբաղեցնեն բիզնես անգլերենի դասավանդման համար հայ մասնագետների հեղինակած ձեռնարկների շարքում և կլրացնեն մատչելի ուսուցման համար անհրաժեշտ գրականության բացը: Ուսումնական ձեռնարկը նախատեսվում է հրատարակել «Տնտեսագետ» հրատարակչությունում, իսկ ուսումնամեթոդական ուղեցույցը՝ հեղինակի միջոցներով:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, լեզուների ամբիոնի, կառավարման ֆակուլտետի խորհրդի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ լեզուների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լուսինե Արմենի Հարությունյանի**, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Սուսաննա Ավետիքի Չալաբյանի** և դասախոս **Քրիստինա Մելսի Թորգոմյանի «English for Accountants»** (հայերեն՝ Անգլերեն հաշվապահների համար) **ուսումնական ձեռնարկը** (100 օրինակ տպաքանակով) և սույն ուսումնական ձեռնարկին կից, դասախոս **Քրիստինա Մելսի Թորգոմյանի «English for Accountants: Teacher's book»** (հայերեն՝ Անգլերեն հաշվապահների համար. Դասավանդողի գիրք) **ուսումնամեթոդական ուղեցույցը** երաշխավորել հրատարակության (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն՝ կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

**Գիտական խորհրդի նախագահ՝** **Դ. Ռ. Գալոյան**

**Գիտական խորհրդի քարտուղար՝** **Ն. Հ. Դարբինյան**

2021 թ. մայիսի 13
Երևան